պահպանվում են գնման գործընթացի պատվիրատուների կողմից: Իսկ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում հակառակն ապացուցելու պարտականություն կրող մասնակցի կողմից այն պատշաճ չկատարելու դեպքում դատարանը ենթադրվող փաստը համարում է հաստատված, որն իր հերթին արդեն առաջ է բերում որոշակի իրավական հետևանքներ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ պատասխանողը, սահմանված ժամկետներում ու կարգով չներկայացնելով հայցադիմումի պատասխան, վերը նշված օրենսդրական կարգավորումների ուժով կրում է դրանցից բխող բացասական հետևանքների ռիսկը: Ուստի հիմք ընդունելով ապացուցման պարտականության վերը նշված նորմերը՝ Դատարանը եզրահանգում է, որ հայցվորի վկայակոչած փաստերը համարվում են հաստատված, իսկ հայցը ենթակա է բավարարման:

5.1. Դատական ծախսերի բաշխման հարցը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով հայցը բավարարվելու հանգամանքը՝ Դատարանն արձանագրում է, որ սույն գործով պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձման ենթակա է 100.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.12, 360-րդ և 362-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Բավարարել «Բիլդինգ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ որոշումն անվավեր ճանաչելու և «Պրո Շին» ՍՊԸ և «Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը մերժելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

1.1. Անվավեր ճանաչել թիվ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.03.2024թ.-ին կազմված թիվ 2-7 արձանագրությամբ ընդունված՝ «Պրո Շին» ՍՊԸ և «Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ կոնսոցիումին պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու և գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին ընդունված որոշումները:

1.2. Պարտավորեցնել գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին մերժել «Պրո Շին» ՍՊԸ և «Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը պարտավորեցնելու պահանջի մասին:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ «Բիլդինգ Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի պարտապանի հաշվին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

ԴԱՏԱՎՈՐ՝ **ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am